Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«_____» _____ 20 թ.

«Օհանյան կրթահամալիրի» տնօրեն՝

Ս. Միսկարյան _____

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր նկարագրություն	
Փաստաթղթի կոդ	ՕԿ/01-01
Մշակման ամսաթիվ	
Վերջին վերանայման ամսաթիվ	
Մշակող	
Ներդրման պատաս-խանատու	

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն/ ազգանուն/ պաշտոն/ ստորագրություն

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ա. Նպատակը

Քաղաքականության նպատակն է սահմանել Կրթահամալիրում սովորող աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման կանոնները:

Բ. Տարածումը

Քաղաքականությունը բաց փաստաթուղթ է և հասանելի է Կրթահամալիրի ողջ անձնակազմին, ծնողներին, սաներին և այլ շահակիցների: Փաստաթղթի հասանալիությունն ապահովվում է պաշտոնական կայքէջում տեղադրելու միջոցով:

Գ. Պատասխանատուն

Քաղաքականության ներդրման և իրականացման, ինչպես նաև պահանջների կատարման համար պատասխանատու է ուսուցչական կազմը:

Դ. Վերանայումը

Փաստաթուղթը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Փոփոխությունները քննարկվում են ուսուցչական, ծնողական և աշակերտական համայնքի հետ: Վերանայումները հաստատվում են Մանկավարժական խորհրդի նիստում:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- Դպրոց, Կրթահամալիր - «Օհանյանկրթահամալիր»
- Քաղաքականություն - «Սովորողների առաջադիմության գնահատման քաղաքականություն»
- IB PYP - Միջազգային բակալավրիատի ծրագիր 3-12 տարեկանների համար
- Սան, աշակերտ - Կրթահամալիրի կրթական ծրագրերում ներգրավված ուսանող
- ՄԲ – միջազգային բակալավրիատ

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

3.1. Կրթահամալիրի տարրական դպրոցում գնահատումն իրականացվում է ինչպես ՀՀ պետական և առարկայական կրթական չափորոշիչների, այնպես էլ Միջազգային բակալավրիատի (IB PYP) պահանջներին համապատասխան:

3.2. Գնահատումն ուսուցման և ուսումնառության գործընթացի անբաժան մասն է կազմում: ՄԲ ծրագրում գնահատումն իրականացվում է սովորողների գործունեությունը նպատակային և արդյունավետ կազմակերպելու ուսուցման հինգ հիմնական տարրերին համապատասխան.

- գիտելիքների ձեռքբերում (the acquisition of knowledge);
- հասկացությունների իմաստավորում (the understanding of concepts);
- կարողությունների զարգացում (the mastering of skills);
- արժեքների ձևավորում (the development of attitudes);
- գործողությունների ձեռնարկում (the decisions to take action):

3.3. Կրթահամալիրում գնահատման **հիմնական նպատակներն են.**

- Խթանել սովորողների առաջընթացը՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման և դրանց շարունակական զարգացման ապահովման միջոցով:
- Մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապ և արձանագրել ձեռքբերումները:
- Շարունակաբար բարելավել կրթական ծրագրերը և դասավանդման մեթոդները;
- Ուսուցիչներին, ծնողներին, տնօրենությանը և այլ շահակիցների տրամադրել լիարժեք և հավաստի տեղեկատվություն յուրաքանչյուր աշակերտի ձեռքբերումների և առաջընթացի մասին:

3.4. Դպրոցում ուսումնական տարին բաժանվում է երկու կիսամյակների:

3.5. Գնահատման գործընթացը բաղկացած է երեք փոխկապակցված փուլերից.

- **Գնահատում (Assessing)** - ինչպես ենք բացահայտում՝ ինչ գիտեն և ինչ են սովորել սովորողները:
- **Գրանցում (Recording)** - ինչպես ենք ընտրում, հավաքագրում և վերլուծում տվյալները:
- **Հաշվետվություն (Reporting)** - ինչպես ենք ներկայացնում տեղեկատվությունը և գնահատման արդյունքները:

4. ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1. Կիրառվում են ստուգման և գնահատման երեք հիմնական ձև՝ հայտորոշիչ (diagnostic) կամ նախնական, ձևավորող (formative) կամ ընթացիկ և ամփոփիչ (summative):

4.2. **Հայտորոշիչ (diagnostic) կամ նախնական գնահատում.**

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է ուսուցման սկզբնական փուլում և հնարավորություն է տալիս պարզել սովորողների նախնական գիտելիքները: Այս գնահատման միջոցով հստակեցվում են սովորողների կարիքներն ու պահանջները, և ուսուցման գործընթացը կազմակերպվում է առավել նպատակային և ուղղորդված:

4.3. **Ձևավորող (formative) կամ ընթացիկ գնահատում.**

Ձևավորող գնահատումը տեղեկատվություն է տրամադրում ուսուցման հաջորդ փուլերն արդյունավետորեն պլանավորելու համար: Այն կապակցված է ուսուցման գործընթացին և հնարավորություն է տալիս ուսուցիչներին պարզելու՝ ինչ գիտեն և ինչ կարող են անել սովորողները:

Ձևավորող գնահատումը նպատակ ունի խթանելու ուսուցման գործընթացը՝ պարբերաբար կանոնավոր հետադարձ կապի ապահովման միջոցով: Այդ գործընթացն օգնում է սովորողներին բարելավել իրենց գիտելիքներն ու ընկալումները, խթանել ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, ինչպես նաև զարգացնել ինքնագնահատման կարողությունները և բացահայտել հաջողության հասնելու երաշխիքները:

4.4. **Ամփոփիչ (summative) գնահատում.**

Ամփոփիչ գնահատման նպատակը ուսումնական գործընթացի արդյունքների մասին տեղեկատվության ապահովումն է: Այն ուսումնական գործընթացի կոնկրետ հատվածի ավարտն է, որի ընթացքում սովորողները հնարավորություն են ունենում ցուցադրելու իրենց ձեռքբերումները բովանդակային բոլոր բաղադրիչների մասով:

Ամփոփիչ գնահատումը տեղեկություններ է պարունակում միաժամանակ ուսուցման մի քանի բաղադրիչների մասին՝ սովորողների ձեռք բերած գիտելիքների, ձևավորված կարողությունների ու հմտությունների, հիմնական գաղափարների ընկալման խորությունյան վերաբերյալ, ինչպես նաև խթանում է սովորողների գործողությունները:

4.5. Ամփոփիչ գնահատման նպատակով սովորողների համար սահմանվում է 1 (նվազագույն) - 10 (առավելագույն) թվանշան (Հավելված 1):

4.6. Տարրական դասարաններում թվային գնահատում կարող է չիրականացվել:

4.7. Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում կիրառվում է ամփոփիչ առնվազն երկու գնահատում:

4.8. Ամփոփիչ գնահատման իրականացման ձևերն ու մեթոդներն ամրագրվում են ուսումնական պլաններում:

4.9. 4-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ: Կազմվում է ամփոփիչ բնութագիր, որում էլ ներառվում են միավորները:

4.10. Միջազգային բակալավրիատի առաքելությամբ իրականացվող ծրագրերում առանցքային են ՄԲ Սովորողի որակների (IB Learner profile) և միջազգային մտածողության ձևավորումը: Ծրագրի ընդհանուր նպատակների իրականացման համատեքստում կարևորվում

է ՄԲ սովորողի որակների (հետաքրքրասեր, բանիմաց, մտածող, հաղորդակցվող, սկզբունքային, լայնախոհ, հոգատար, համարձակ, հավասարակշռված և արձագանքող) ձևավորման գնահատումը և տեղեկատվության վերլուծությունը:

4.11. **ՄԲ ծրագրում ներգրավված սովորողների վերջնական ձեռքբերումների գնահատումն իրականացվում է ստուգատեսի (Exhibition) միջոցով.** PYP ծրագրում ներգրավված 4-րդ դասարանի սաները մշակում և ներկայացնում են իրենց անհատական կամ խմբային նախագծերը միջառարկայական թեմաների շրջանակներում: Այս ստուգատեսը (Exhibition) ընդգրկում է PYP-ի բոլոր հինգ տարրերը (գիտելիք, հասկացություն, կարողություն, արժեք, գործողություն) և հնարավորություն տալիս ստուգելու դրանց զարգացման մակարդակը յուրաքանչյուր սովորողի պարագայում:

5. ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

5.1. Ուսուցիչներն ազատ են ըստ նպատակի ընտրելու գնահատման ռազմավարությունները և գործիքները, ինչպես նաև կիրառելու անհատական կամ խմբային աշխատանքի գնահատման ցանկացած տեսակ (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1. Գնահատման ռազմավարություններ և գործիքներ

Գնահատման գործիքներ / Գնահատման ռազմ.	Ռուբրիկներ /Rubrics/	Օրինակներ /Exemplars/	Տեղեկագրեր /Checklists/	Գրառումներ /Records/
Դիտարկում /Observations/	√		√	√
Առաջադիմության գնահատում /Performance Assessments/	√	√		√
Գործընթացի գնահատում /Process-Focussed Assessments/	√		√	√
Ընտրովի պատասխաններով առաջադրանք /Selected Responses/		√	√	
Բազմաթիվ պատասխաններով առաջադրանքներ /Open-Ended Tasks/	√	√		√

5.2. Սովորողների ուսումնառության վերաբերյալ տվյալների արձանագրումը բոլոր սաների համար պարտադիր է PYP-ի ողջ ընթացքում: Սովորողների ուսումնառության գործընթացը դիտարկվում է ուսուցիչների կողմից և ուսման ընթացքի վերաբերյալ հավաստի փաստեր են հավաքվում և պահվում յուրաքանչյուր սովորողի համար՝ կազմելով անհատական թղթապանակներ (Portfolios): Թղթապանակը նպատակաուղղված է սովորողի

առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն՝ կոնկրետ օրինակներով և դիտարկումներով: Վերջինս կազմվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար և տարեվերջին փոխանցվում սովորողի ծնողներին:

5.3. Ուսումնական կիսամյակի ավարտին յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ամփոփ տեղեկատվություն ուսումնառության գործընթացի ու արդյունքների վերաբերյալ՝ PYP բոլոր տարրերի ընդգրկմամբ: PYP համակարգողի հաստատումից հետո գնահատումն ուղարկվում է աշակերտի ծնողներին:

5.4. Ուսումնական տարվա մեջ առնվազն մեկ անգամ կազմակերպվում է խմբային կամ անհատական ծնող-ուսուցիչ-սովորող հանդիպում (Three Way Conference), որի ընթացքում ներկայացվում և քննարկվում են գործընթացին և ուսումնական ձեռքբերումներին վերաբերող հարցեր:

5.5. Տարվա մեջ նվազագույնը երկու անգամ իրականացվում են խմբային ծնող-ուսուցիչ հանդիպումներ՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ ընդհանրական հարցեր, կազմակերպչական խնդիրներ քննարկելու նպատակով:

Հավելված 1. Միավորային գնահատման սանդղակ

Միավոր	Միավորային գհանատականի նկարագրիչներ
9-10	**Գերազանց առաջադիմություն** Սովորողը խորապես ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողությունները միշտ անթերի և արդյունավետորեն կիրառելու բազմաբնույթ իրավիճակներում: Միշտ դրսևորում է վերլուծական, համադրական մտածողական հմտություններ և տալիս է գնահատական: Հիմնականում դրսևորում է յուրահատուկ մոտեցումներ և ներզգացողություն (ինտուիցիա), միշտ կատարում և ներկայացնում է որակյալ աշխատանք:
8	**Շատ լավ առաջադիմություն** Սովորողը լավ ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողությունները արդյունավետորեն կիրառելու բազմաբնույթ իրավիճակներում: Հիմնականում դրսևորում է վերլուծական, համադրական մտածողական կարողություններ և համապատասխան տալիս է գնահատական: Սովորողը ընդհանուր առմամբ դրսևորում է յուրահատուկ մոտեցումներ և ներզգացողություն (ինտուիցիա):
6-7	**Լավ առաջադիմություն** Սովորողը լավ ըմբռնել է պահանջվող գիտելիքը և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողությունները արդյունավետորեն կիրառելու նաև տարբեր իրավիճակներում: Ընդհանուր առմամբ վերլուծական, համադրական մտածողական կարողություններ է դրսևորում և տալիս է գնահատական :
4-5	**Բավարար առաջադիմություն** Սովորողը բավարար չափով ըմբռնել է պահանջվող գիտելիքը և և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողություններն արդյունավետորեն կիրառելու սովորական կամ եզակի իրավիճակներում: Հազվադեպ է վերլուծական, համադրական մտածողական կարողություններ դրսևորում և գնահատական տալիս:
1-3	**Անբավարար առաջադիմություն** Սովորողը սահմանափակ ձեռքբերումներ ունի չափորոշչային սանդղակներով ներկայացվող պահանջներից և դժվարանում է որոշակի ոլորտներում: Դրսևորում է սահմանափակ կարողություններ պահանջվող գիտելիքները հասկանալու և դրանք կիրառելու գործում: Նա դա կարող է անել միայն ծանոթ իրավիճակներում և աջակցության առկայության դեպքում: